ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

Գյուղ Գեղակերտ
27.08.2024 թվական

2024 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 12:00-ին Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքում տեղական մասնակցային բյուջետավորման գործընթացների կազմակերպման և իրականացման հանձնաժողովի նիստ՝ Մասնակցային բյուջետավորման գործընթացում ծրագրային առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Շողիկ Պողոսյանը:

Օրակարգում՝

1. 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքում տեղական մասնակցային բյուջետավորման գործընթացում ծրագրային առաջարկների քվերակության արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովի նախագահ Շողիկ Պողոսյանը ներկայացրեց, որ Խոյ համայնքում տեղական մասնակցային բյուջետավորման գործընթացում ծրագրային առաջարկների քվեարկությունն ավարտվել է 2024 թվականի օգոստոսի 26-ին, ժամը 18:00-ին և ներկայացրեց քվերակության փուլ անցած ծրագրային առաջարկների քվերակության արդյունքները:

1. Բացօթյա մարզահրապարակի կառուցում, հեղինակ՝ Եղիշե Արսենյան- 38 ձայն:
2. Նստարան-զրուցարանների կառուցում, հեղինակ՝ Ֆրիդա Բաղդասարյան-36 ձայն:
3. Խաղային համալիրի կառուցում, հեղինակ՝ Լիլիթ Հակոբյան-30 ձայն:
4. Բակային ճամբարի կազմակերպում, հեղինակ՝ Լիլիթ Հովակիմյան-14 ձայն:

Քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո հանձնաժողովի նախագահ Շողիկ Պողոսյանը արձանագրեց հաղթող ծրագրային առաջարկը՝ Բացօթյա մարզահրապարակի կառուցում, հեղինակ՝ Եղիշե Արսենյան:

Հանձնաժողովը որոշեց՝

Նիստի արձանագրության արդյունքների մասին տեղեկացնել ծրագրային առաջարկների հեղինակներին և Հաղթող ծրագիր-առաջարկը ներկայացնել Խոյ համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակյանին ծրագրի իրականացման հետագա ընթացքն կազմակերպելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ **Շողիկ Պողոսյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ջավահիր Ամիրխանյան**